ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Նախագծային ուսուցումը «Գեղագիտություն» թեմայի դասավանդման ընթացքում |
| ԱՌԱՐԿԱ | Հասարակագիտություն |
| ՀԵՂԻՆԱԿ | Միքայելյան Շուշան |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Խնաձախ միջնակարգ դպրոց |

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ----------5
ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ----------7
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------12
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------13

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր դպրոցի և ուսուցչի առջև բազմաթիվ խնդիրներ են դրված։ Պետք է փնտրել ուղիներ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու համար։ Հնարավորինս մշակել այնպիսի ռազմավարություններ, որոնք կսովորեցնեն աշակերտներին նյութի յուրացման ընթացքում ինքնուրույն դիտարկումներ և եզրահանգումներ անել, վերլուծել, տարբեր իրավիճակներում հեշտ կողմնորոշվել, փնտրել և գտնել լուծումներ։

Հանրակրթական դպրոցի նպատակը եղել է մնում է միայն մեկը՝ աշակերտներին նախապատրաստել նոր կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության համար ակտիվ անդամներ։ Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին,որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները,որ նրանց պասիվ ունկնդրողի դերը փոխվի ակտիվ մասնակցի դերով։ Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ և ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառները, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ։

Ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ։ Այդ տեխնոլոգիաներից է նախագծային ուսուցումը, որն իրականացվում է տրված առաջադրանք կատարելու նպատակով։ Նածագծային ուսուցման հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերելու գիտելիքներ։ Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած են սովորողի ճանաչողական, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու։ Նախագծային աշխատանքի ժամանակ ուսուցիչը հանդես է գալիս որպես մշակող, համակրգող։ ՈՒսուցիչն ու աշակերտները աշխատում են համատեղ, որի նպատակն է կրթական այս կամ այն խնդրի լուծումը։

Այժմյան կրթական համակարգը թույլ է տալիս ստեղծել բոլոր հնարավորությունները դպրոցում նախագծային ուսուցում իրականացնելու։ Նախագծային մեթոդը թույլ է տալիս սովորողին և դասավանդողին նախագիծը սկսելուց առաջ որոնողական և ստեղծագործական աշխատանք կատարել։

**Թեմայի արդիականությունը** պայմանավորված է «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման ժամանակ նախագծային ուսուցման կազմակերպման կարևորությամբ և մեթոդական գրականության խիստ սակավաթիվությամբ։

**Թեմայի նպատակը և խնդիրները։** Աշխատանքը նպատակ ունի ներկայացնելու «Գեղագիտություն» թեմայով ուսումնական նախագծի մշակման և իրականացման կարգն ու առանձնահատկությունները։

**Նշված նպատակի իրագործելու համար մեր առջև դրեցինք հետևյալ խնդիրները.**

- բացահայտել հասարակագիտության դասավանդման ընթացքում նախագծային ուսուցման կազմակերպման կարևորությունը, տիպաբանություն, դրա կառուցվածքը,
- ներկայացնել նախագծային ուսուցումը «Գեղագիտություն» թեմայի դասավանդման ընթացքում,
- մշակել նախագծի նմուշ-օրինակ:

**Հետազոտական աշխատանքի օբյեկտն ու առարկան:** Հետազոտական աշխատանքի օբյեկտը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումն է, իսկ առարկան՝ հասարակագիտության դասերին «Գեղագիտություն» թեմայով ուսումնական նախագծի մշակման և իրականացման առանձնահատկությունների բացահայտումը:

**Հետազոտության մեթոդ-** Հետազոտության համար կիրառվել են վերացարկման, վերլուծության, համադրության և փորձի մեթոդները:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նախագծային մեթոդը խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու գործընթաց է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով: Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով:

Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Սա նշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակումը , որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»[1]: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Նախագծի կազմակերպման և իրականացման ընթացքում կարևոր է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները, կարողությունները, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հմտությունները, հնարավորությունների սահմանը: Յուրաքանչյուր նախագծի ավարտին սովորողը, իր կատարած աշխատանքի արդյունքը տեսնելով, մեծ ոգևորություն է ապրում[2]:

Նախագծային մեթոդն ուսումնական գործունեության ձև է, երբ սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթացում, ինքնուրույն

---

[1] Տես՝ Дьюи, Дж., Введение в философию воспитания, М.: Госиздат, 1921, с. 19:

[2] Տես՝ Бурков В.Н., Как управлять проектами, М.:: Синтег, 1997, с.23:

ձևակերպում են ուսումնական խնդիրը, անհրաժեշտ տեղեկություններ հավաքում, մշակում խնդրի լուծման տարբերակները, վերլուծում աշխատանքի արդյունքները, կատարում եզրահանգումներ։

Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է ծրագրային նյութի ընկալմանը, թույլ է տալիս բնականոն կերպով զարգացնել անհրաժեշտ ուսումնական ունակություններ, ձևավորել հաղորդակցային կարողություններ։ Հատուկ պետք է նշել այս մեթոդի արդյունավետությունը սովորողների պատասխանատվության, ինքնուրույնության, խմբի հետ աշխատելու ունակության զարգացման գործում։

Գոյություն ունեցող մանկավարժական պրակտիկան հիմք է տալիս նախագծերը դասակարգելու հետևյալ կերպ

- ըստ սովորողների գերակշռող գործունեության (առարկայորեն կողմնորոշված, հետազոտական, ստեղծագործական, տեղեկատվական, դերային),
- ըստ բովանդակության (միջառարկայական և մոնոնախագծեր),
- ըստ հարաբերությունների բնույթի (ներդասարանային, միջդասարանային, տարածաշրջանային, համապետական, միջազգային),
- ըստ տևողության (մինինախագծեր՝ մինչև մեկ շաբաթ, կարճաժամկետ՝ մինչև մեկ ամիս, միջնաժամկետ՝ մինչև վեց ամիս, երկարաժամկետ՝ կես տարուց ավելի),
- ըստ մասնակիցների թվի (անհատական, խմբային, միջխմբային)

**Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար**

1. Թեմայի տրոհում ենթաթեմաների
2. Նախաձեռնող 4 խմբերի ձևավորում
3. Տեղեկատվության հավաքագրում
4. Տեղեկատվությունների քննարկում, մշակում
5. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում
6. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
7. Նախագծի պաշտպանություն
8. Արդյունքների ամփոփում

**Տարբերում են նախագծերի իրականացման հետևյալ փուլերը.**

1. Պրոբլեմ (հիմնահարց)
2. Պլանավորում (նախագծում
3. Պրպտում (տեղեկատվության որոնում)
4. Պատրաստում (նախապատրաստում)
5. Պաշտպանություն (պրեզենտացիա

Նախագծային աշխատանքը թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի գիտելիքներն ու կարողությունները գնահատել համալիր կերպով։ Ուսուցիչը յուրաքանչյուր աշխատանքի համար գրախոսություն պետք է պատրաստի։ Այնուհետև պետք է աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրական կողմերը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքների բարելավելու կապակցությամբ աշակերտների առաջարկները (ռեֆլեքսիայի

սկզբունք)[3]:

## ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Գեղագիտություն թեմայի շրջանակում կիրառեցինք նախագծային մեթոդը:
Գեղագիտություն թեմայի նպատակներն են.

- Բնութագրել շրջապատող իրերի գեղեցկությունը, նկարագրեկ գեղեցիկի ընկալումները տարբեր մշակութային միջավայրերում:
- Մոդա,ազգային հագուստ
- Ներկայացնել մաքրության գեղագիտական նշանակությունը, բնության պահպանումը:

Նախագծի կատարման ժամանակը- 2 ամիս

Դասարանը բաժանեցինք խմբերի: Կիրառվեց «Մասնագիտությունների քաղաք» մեթոդը:

**Առաջին խումբը** պետք է հարցազրույց անցկացներ տարբեր տարիքի անձանց հետ գեղեցիկի պահպանման վերաբերյալ: Եվ այն ներկայացներ հաղորդման և սահիկաշարի տեսքով տեսքով:

**Երկրորդ խումբը** պետք է կազմակերպեր ցուցահանդես. ցուցադրեր ազգային տարազներ:

**Երրորդ խումբը** դպրոցի շրջակայքում պետք է ծաղիկներ տնկեր:

**Չորրորդ խումբը** կարճամետրաժ ֆիլմ նկարեր արվեստի ճյուղերի մասին:

Վերջնական արդյունքը պետք է լինի դպրոցական միջոցառում նվիրված ազգային մշակույթին և ծաղկանոցի պատրաստում:

### I. Նախապատրաստում

Այս փուլում որոշվում է նախագծի թեման և նպատակը, ներկայացվում է հիմնախնդրը:

**Սովորողների գործունեությունը.** քննարկում են թեման ուսուցչի հետ և անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ստանում, ապա՝ նպատակներ դնում:

**Ուսուցչի գործունեությունը.** ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի իմաստին ու պատճառաբանում այդ մեթոդը, ինչն օգնում է նպատակադրմանը: Աշակերտներին տրվում է հանձնարարություն. «Լուծե՛ք խնդիրը՝ հիմքում դնելով համամոլորակային հիմնախնդիր: Ի՞նչ կպատահի, եթե Երկրի երեսից վերանա երկաթը: Ի՞նչ գործոններ են երկաթը դարձրել այդքան կարևոր և փաստորեն,անփոխարինելի»: Այդ հարցի պատասխանի փնտրտուքն էլ կանխորոշեց նախագծի հետագա աշխատանքները: Առաջ քաշվեցին այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում էր և՛ տեսական հիմնավորումներ, և՛ փորձնական հաստատումներ:

---

[3] Տես՝ Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании, Проблемы современного образования, научно-теоретический журнал, Москва, 2011, №6., с. 35-43:

II. **Պլանավորում**

Այս փուլում կատարվում է տեղեկությունների, աղբյուրների, արդյունքների ներկայացման եղանակների (հաշվետվության ձևերի), արդյունքների և գործընթացի գնահատման չափանիշների որոշում, թիմի անդամների միջև խնդիրների (պարտականությունների) բաշխումը:

**Սովորողների գործունեությունը**. Սովորողները գործողության ծրագիր են մշակում ու խնդիրներ ձևակերպում:

**Ուսուցչի գործունեությունը.** Պլանավորման փուլում ուսուցիչը կատարում է նախապատրաստական աշխատանք. աշակերտների գիտելիքների հիման վրա առաջնային գաղափարների առաջադրում, աշակերտների հակումների, հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտում, նախագծերի թեմաների առաջադրում, վարկածների ու նպատակների ձևակերպում, պլանի մշակում, աշխատող խմբերի ձևավորում, նախագծի ղեկավարի ընտրություն:

Կարևոր պահ է ռեսուրսային ապահովվածությունը՝ համակարգչային սարքավորումների, առուդիո, վիդեո, պատճենահանման տեխնիկայի տրամադրումը, գրադարանային սպասարկումը:

Մասնակիցների պարտավորությունների բաշխումը կատարում են իրե՛նք՝ աշակերտները՝ բաց քննարկմամբ: Ուսուցիչը նույնպես հայտնում է իր կարծիքը՝ հավասարը հավասարի հետ սկզբունքով քննարկմանը մասնակցելով:

Յուրաքանչյուր աշակերտի պարտականությունները որոշելիս պետք է հաշվի առնել նրա անձը, անհատական հակումները, հետաքրքրությունները և այլ հատկություններ: Խիստ կարևոր է հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը: Մենք կազմել էինք մոտավոր ժամանակացույց, որում նշվելէին յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետը և սպասվող արդյունքները:

III. **Պրպտում (տեղեկատվության որոնում)՝**

Այս փուլում կատարվում է տեղեկությունների հավաքում, միջանկյալ խնդիրների լուծում, հետազոտության մեթոդին տիրապետում: Հիմնական միջոցները՝ հարցում, դիտում, փորձ:

**Սովորողների գործունեությունը.** կատարում են հետազոտություն՝ միջանկյալ խնդիրներ լուծելով:

**Ուսուցչի գործունեությունը.** հետևում է, խորհրդակցում, անուղղակի ղեկավարում գործընթացը:

Պրպտում փուլի ընթացքում աշակերտներն իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքագրում՝ գրականության աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, ինտերնետն օգտագործելով: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականության հետ աշխատելու համար առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Աշակերտները յուրացնում են

տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և սինթեզելու ընդունակությունը։

Կարելի է նաև խումբը բաժանել չորս ենթախմբի։ Այդ ենթախմբերից առաջինը զբաղվում է գրականության վերաբերյալ ակնարկի պատրաստմամբ, երկրորդը՝ նախապատրաստվում և կատարում փորձնական մասը, երրորդը՝ զբաղվում նախագծի համակարգչային ներկայացմամբ, իսկ չորրորդը՝ դպրոցական համաժողովում զեկուցում կատարված աշխատանքի մասին։

IV. Պատրաստում (նախապատրաստում)

Այս փուլում կատարվում է տեղեկությունների վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում։

**Սովորողների գործունեությունը.** Աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում են տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, շտկումներ անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը։

**Ուսուցչի գործունեությունը.** Ուսուցիչը կատարում է դիտարկումներ, անհրաժեշտության դեպքում աշակերտներին խորհուրդներ է տալիս, նախապատրաստում նախագծի պաշտպանությանը։

Ստացված տեղեկատվության մշակումն աշակերտներից պահանջվում է խոր ըմբռնում և իմաստավորում, փաստերի վերլուծություն և եզրակացություն անելու հմտություն, ստացված տվյալների համակարգում։ Ընդ որում՝ մշակվում են փորձերի, սոցոլոգիական հարցումների և անկետավորման արդյունքները։

V. Արդյունքների ներկայացումը (հաշվետվությունը).

Այս փուլում աշակերտներին նախագծի ներկայացման ձևի ընտրության մեջ առավելագույն ինքնուրույնություն է ընձեռվում։

Կատարվում է արդյունքների ներկայացում տարբեր ձևերով՝ բանավոր հաշվետվություն, բանավոր հաշվետվություն՝ նյութի ցուցադրմամբ, գրավոր հաշվետվություն։

Սովորողները հաշվետվություն են տալիս, քննարկում հաշվետվությունները։ Ուսուցիչը լսում է և նպատակային հարցեր առաջարկում կամ ելույթ ունենում՝ որպես սովորական մասնակից։

Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման, ստենդային հոդվածի ձևով։

**Արդյունքների և գործընթացի գնահատում.**

**Սովորողները** կոլեկտիվով քննարկում են գնահատականները, տալիս գործունեության ինքնագնահատում։

Ուսուցչը գնահատում է սովորողների ջանքերը, նրանց կրեատիվությունը, տեղեկությունների աղբյուրներիօգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավոր լինելը, հաշվետվության որակը։

Նախագծային աշխատանքի ինքնագնահատում

| Չափանիշ | Գերազանց<br>3 | Բավարար<br>2 | Բարելավման ենթակա<br>1 |
|---|---|---|---|
| **Գիտելիք և ընկալում** | Ներկայացումը ցուցադրում է պատմական ընկալման խորություն՝ օգտագործելով տեղին և ճշգրիտ դետալներ թեմայի վերաբերյալ: Հետազոտությունը մանրակրկիտ է արված և հանձնարարվածից ավելին է ներկայացնում: | Ներկայացումը հիմնականում հիմնված է ճշգրիտ տվյալների, գիտելիքների վրա, սակայն առկա են որոշ անճշտություններ, որոնք առավելապես կախված են սովորողի թեմայից: Հետազոտությունը համապատասխանում է պահանջներին, սակայն հիմնականում հանձնարարության սահմաններում է իրականացվել: | Ներկայացման մեջ օգտագործված տեղեկությունները ճշգրիտ չէին և չէին բխում բուն նյութից, նույնիսկ հանձնարարության տեքստից: Հետազոտություն գործնականում կատարված չէ: |
| **Հարցում և վերլուծություն** | Ներկայացումը կենտրանացած է հետազոտության նյութի վրա և ցուցադրում է բարձր մակարդակի տեղեկացվածություն պատմական և հասարակական խնդիրների վերաբերյալ և ընդգծված վերլուծական կարողություններ: | Ներկայացումը ներկայացված է մտածված կառուցվածքով և թեմայի շուրջ, սակայն վերլուծությունը բավարար մշակված չէ և/կամ չի բխում թեմայից: | Ներկայացումը լավ մտածված կառուցվածք չունի և չի արտահայտում թեման: |
| **Հաղորդակցու-թյուն** | Ներկայացումը ինքնատիպ է և գաղափարներն արդյունավետորեն է փոխանցում լսարանին: | Ներկայացման օգտագործված մեթոդները արդյունավետ են հիմնական միտքը փոխանցելու համար, | Ներկայացումը չի գրավում լսարանի հետաքրքրությունը և/կամ շեղում է հիմնական գաղափարից: |

| | | | |
|---|---|---|---|
| | Բանախոսը արդյունավետ անդրադարձ է անում լսարանի արձագանքին և հարցերին: | բայց զուրկ են երևակայությունից: Լսարանից հնչած որոշ հարցեր մնացին անպատասխան: | |
| **Ցուցադրական նյութեր** | Ներկայացումը ներառում է համապատասխան և հեշտ ընկալելի ցուցադրական նյութեր, որոնց միջոցով զեկուցողը բացատրում է՝ տեղին հղումներ կատարելով: | Ներկայացումը ներառում է համապատասխան և ցուցադրական նյութեր, սակայն դրանք քիչ են և այնպիսի ձևաչափով որ դժվարացնում են դրանց ընկալումը և/կամ զեկուցողը դրանց հղում չի անում և չի բացատրում դրանք: | Ներկայացումը չի ներառում ցուցադրական նյութեր կամ, եթե կան, դրանք տեղին և նպատակային չեն և չեն հասկացվում: Զեկուցողը ներկայացման մեջ չի հիշատակում դրանք: |
| **Ներկայացման հմտություններ** | Զեկուզողը խոսում է հստակ և բավարար հնչեղ ձայնով, ինչը գրավում է լսարանի ուշադրությունը և նյութի ընկալելի լինելը՝ պահելով տեսողական շփում, ժեստերի և մարմնի համապատասխան լեզու: | Զեկուզողը խոսում է հստակ և բավարար հնչեղ ձայնով, ինչը նրան լսելի է դարձնում, սակայն չի կիրառում տեսողական շփում, ժեստերի և մարմնի համապատասխան լեզու: | Զեկուցողի ձայնը չի լսվում կամ նա ոչ հստակ է խոսում, միտքը դժվար է հասկացվում: Փորձ չի անում գրավելու լսարանի ուշադրությունը տեսողական շփում կամ մարմնի լեզուն կիրառելով: |

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախագծային մեթոդը հնարավորություն է տալիս արդյունավետ դարձնել հասարակագիտության ուսուցման գործընթացը: Աշակերտները ձեռք են բերում ինքնուրույնաբար սովորելու և ստեղծագործելու, դրսևորել հետազոտություն կատարելու հմտություններ, ծանոթացան գիտահետազոտական աշխատանքների կատարման ձևաչափերին:

Այն հնարավորություն է ընձեռում զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները, կապ ստեղծելու ձեռք բերված գիտելիքների ,կարողությունների և դրանց կիրառման միջև: Ուսուցման այս ձևը առաջնահերթությունը տալիս է սովորողների մտածողության զարգացմանը, ակտիվ, ինքնուրույն ուսումնաճանաչողական գործունեության հմտության ձևավորմանը: Այն նպաստում է համագործակցային պատասխանատվության, առաջացած խնդիրների լուծման և սեփական դիտարկումներն իրականացնելու կարողությունների զարգացմանը:

Նախագծային մեթոդը հասարակագիտության դասընթացի ժամանակ կիրառելիս անհրաժեշտ է հիշել, որ այն շատ աշխատատար է: Սակայն անհրաժեշտ է նաև նշել, որ նախագծային ուսուցումն ավելի արդյունավետ է:

Այս մեթոդը բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը և աշակերտների մոտիվացվածությունը: Հասարակագիտության դասավանդման մեջ՝ որպես նոր ռազմավարություն ընտրված նախագծային մեթոդը օգնում է աշակերտների մոտ ձևավորել ավելի լայն մտածողություն, սովորողներին մղում է առավել խորքային դիտարկումների:

Ուսուցման այս մեթոդը մեզ կօգնի, որպեսզի սովորողները քննեն հասարակագիտությունը, ըմբռնեն և իմանան իրենց իրավունքներն ու պարտականությունները

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Бурков, В.Н., Как управлять проектами, Москва, Синтег, 1997:
2. Дьюи, Дж. Введение в философию воспитания, Москва, Госиздат, 1921:
3. Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании, Проблемы современного образования, научно-теоретический журнал, Москва, 2011, №6.: